Բարձրունի

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արսեն Ալեքսանյան

Հեռ. +374 77173434

Բարձրունի գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, մարզկենտրոնից 41 կմ հարավ-արևելք, Վայոց ձորի լեռների հարավահայաց լանջին։ Գյուղը սահմանամերձ բնակավայր է, Երևանից գտնվում է 220 կմ հեռավորության վրա, Վայք քաղաքից հեռավորությունը կազմում է 28 կմ, ծովի մակերևույթից բարձրությունը կազմում է 1950-2050 մ։

Կլիման ձմռանը ցրտաշունչ է ,ամռանը՝ զով։ Տարեկան տեղումների քանակը կազմում է 350-400մմ։ Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են և չոր տափաստաններ, որոնց մի մասը վերամշակվել են՝ վերածվել կուլտուր-ռռոգելի լանդշաֆտների։

Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի սկզբներին, վերաբնակեցվել է 1928 թվականին՝ Արեմտյան Հայաստանի Խոյ, Սալմաստ գավառներից ներգաղթված հայերով։ Սակայն գյուղն ավելի հին է քան ենթադրվում է։ Այդ մասին վկայում են <Հին գյուղ> կոչվող տարածքում հայտնաբերված 7-րդ դարով թվագրված խաչքարերը, ինչպես նաև զարդաքարերով, սրբատաշ քարերով կիսավեր կառույցները։

Գյուղի կենսագործունեության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է։ Կլիման նպաստավոր է այգեգործության, հացահատիկային, կերային մշակաբույսերի աճեցման համար։ Մարդիկ զբաղվում են անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ։ Պահուստային հողերը չեն օգտագործվում սահմանամերձ լինելու պատճառով:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Բարձրունի գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 23 հուշարձան։